ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ
(1899–1970)

Հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ: Ծնվել է Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի ծխական, ապա Վարագա Ժառանգավորաց և Հայկազյան վարժարաններում: 1915 թ. գաղթել է Արևելյան Հայաստան և ընդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ավարտելուց հետո մինչև 1950 թ. հայոց լեզու և գրականություն է դասավանդել Էջմիածնի շրջանի և Երևանի տարբեր դպրոցներում:

Մահացել է Երևանում:

ԴԵՊԻ ՎԱՐԱԳ

(հատված «Երկար, երկար մի ճանապարհ» ինքնակենսագրական վեպից)

Վարագ...

Շատերի համար դա մենաստան է Վասպուրականում. լեռների գրկում յոթնագմբեթ վանք, յոթնանուն խորան, իսկ ոմանց համար՝ ամառանոց չքնաղ՝ բնության ու մարդու կողմից սքանչելագործված: Մեկ ուրիշը կասի. «Խրիմյան Հայրիկի արծվաբույնն է, որտեղ մեծ հայրենասեր վարդապետը հիմնեց իր Ժառանգավորաց վարժարանը»:

Մեկի համար վանք է Վարագը, ուխտատեղի և աղոթավայր, մյուսի համար՝ հնություն հազարամյա, հուշարձան թանկագին...

Իսկ ինձ համար Վարագը երգ է, երազ, կախարդական հեքիաթ...

Վարագը իմ կյանքի առավոտն է՝ պայծառ ու պայծառ, կապույտ երկնքով, պատանեկությանս կախյալ պարտեզը, կանաչ կամ թռչող դղրյակը՝ դրված զմրուխտ հավքի թևերի վրա...

Վարա՛գը...

Նրա նկարն է այսօր գրասեղանիս վերև՝ պատին փակցրած, փոքրադիր մի նկար՝ թանկագին, անչափ նվիրական:

Ինչպես տարագիր հայը աշխարհի քառուղիներում թափառելիս մի օր պատահաբար գտնում է կորած իր հարազատին, գրկում, համբուրում ու ձեռքից բռնած՝ տանում է նրան, այդպես ես մի օր գտա այդ նկարն ու բերեցի տուն, կախեցի պատից՝ իմ դեմուդեմ, որ նայեմ նրան երկա՛ր ու երկար ու կարոտս առնեմ:

Ահա նա՝ Վարագը՝ իր գմբեթներով ու վարժարանով, շրջակայքով կանաչ, բարձրաբերձ անտառազարդ լեռներով ու երկնքով կապույտ...

Գալի՜ս եմ, Վարա՛գ, ա՛ռ ինձ...

Ահա բռնում է հայրս իմ ձեռքից, և մենք միասին ճամփա ենք ընկնում դեպի Վարագ:

Մեր տունն ու մերոնց թողած՝ իջնում ենք քարքարոտ արահետով ձորի աղբյուրը:

Աղբյուրը կայլակում է փայտե ծորակից ջրհորդանի պես: Ջուրը շողշողալով հոսում է քարերի արանքում բուսած դաղձի և այլ խոտերի միջով ձորակն ի վար: Աղբյուրի գլխին կանգնած երկու հինավուրց ուռիներ կախել են իրենց սաղարթախիտ ճյուղերն ու սոսափում են վաղ աշնանային առավոտյան մեղմ հովից:

– Հայրի՛կ, Վարագում աղբյուր կա՞:

– Շա՛տ, մի քանիսը՝ անուններով: Մի աղբյուր էլ կա Գյալու մեջ, որ կոչվում է Ապարանջան՝ սա՛ռը, ջրառատ:

Ոլորուն արահետով բարձրանում ենք ձորակն ի վեր: Փոքրիկ, կանաչ մարգագետին, որից հետո բլուրն է սեպաձև, բլրի ստորոտում՝ թփուտներ: Այստեղ գարնանը ծաղկում են կապո՛ւյտ-կապույտ մանրաթերթիկ ծաղիկներ՝ անմոռուկներ:

Բարակ արահետով բարձրանում ենք դարն ի վեր: Դժվար է վերելքը. քայլում ենք դանդաղ, շնչակտուր: Հասնելով կատարը՝ կանգ

ենք առնում մի քանի րոպե՝ հանգստանալու, ու նայում ենք հետ: Շուշանցն է հանդիպակաց բլրալանջին: Ահա ժամը, մեր տունը...

Ի՞նչ են անում հիմա մերոնք՝ եղբայրներս, Արմաղանը...

Հրաժեշտի պահն եմ մտաբերում: Համբուրելուց հետո ինձ «գնաս բարով» ասելիս դողաց Արմաղանի ձայնը, ու թարթիչնե-րը թրջվեցին: Օհանը ժպտում էր, բայց այնպիսի ժպիտ էր դա, որ կարող էր իսկույն փոխվել լացի: Ծռմռվում էին նրա շրթունքները: Կարոն կանչեց իմ հետևից. «Գալ տարի ես էլ կգամ»:

Մնա՛ք բարով, հարազատնե՛րս...

Հայր ու որդի քայլում ենք ոլորապտույտ լեռնուղիներով, իրար գրկած բլուր-բլրակների լանջով. Շուշանցը մեր հետևում է, որ էլ չի երևում: Բայց Այգեստանի չքնաղ համայնապատկերը մեր աչքի առաջ է միշտ՝ այգիների զմրուխտ կանաչով ու փիրուզյա կա-պույտով ծովի, որի վրա սպիտակ-սպիտակ առագաստանավեր են լողում:

– Օ՜, գեղեցի՛կդ Վան, Վասպուրական աշխարհի ցավ ու պսակ,– բացականչում է հայրս սքանչացած:

Հառաչալից այդ խոսքերը ծանոթ են ինձ, գիտեմ՝ Խրիմյանինն են դրանք: Գիտեմ, որովհետև նրա գրվածքներից հայրս հաճախ է հատվածներ արտասանում: Հիշելով իր պաշտելի Հայրիկին՝ ես սպասում եմ, որ հայրս հիմա կսկսի դարձյալ խոսել նրա մասին, պատմել նրանից, բայց ո՛չ, այս անգամ այդքանով բավարարվում է նա, քանզի Վասպուրական աշխարհի չքնաղ զարդը՝ ծովակն ամենագեղ, գերել է նրան ու գրավել նրա ուշադրությունը, և նա իր հիացմունքն արտահայտում է մի նոր բացականչությամբ.

– Ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն...:

Այդ արդեն նորություն էր ինձ համար. անծանոթ էի դեռ: Չգի-տեի, որ այդ ծիծղուն-ծիածանվող տողը Նարեկացունն է, որով պիտի հարստանամ հետո ու հպարտանամ, արբեմ մեծասքանչ տաղերով նրա և մանավանդ «Մատյան ողբերգությամբ»: Մատ-յան մեծաշունչ, որով, գլուխներս բարձր բռնած, կարող ենք մտնել համաշխարհային պոեզիայի գանձարանը և այն դնելով այնտեղ՝ ասել. «Ահա և մենք, ահա մեր բազմադարյան դպրության հոգևոր մշակույթի շողշողուն ադամանդը...»:

Հասնում ենք Կարկուտ-խաչ:

– Վարագն է,– ասում է՝ ցույց տալով դեպի արևելակողմը՝ մեզանից հազիվ հինգ հարյուր քայլ հեռու երկինք խոյացող իր գմբեթներով վանքն ու վարժարանը:

Հայրս խաչ է հանում երեսին՝ միաժամանակ մրմնջալով.

– Մենաստաննե՛ր, խաչն ի գմբեթ,

Ավետարա՛ն, սո՛ւրբ հավատ...

Կանգ ենք առնում մի պահ ու նայում մեր շուրջը. ընդարձակ հորիզոն՝ պարագծված լեռներով ու ծովով: Արևը, ամառավերջի լուսապայծառ արևը ողողել է սքանչագեղ լեռնահովիտը: Բլուրների վրա ու լեռնալանջերին հնձված և աշարա արտերի գորգերն են փռված՝ փոքր ու մեծ, պես-պես, նկարչագեղ: Տեղ-տեղ ծառազարդ օազիսներ կան, կանաչ կղզյակներ՝ ոսկենարինջ լեռների ու բլուրների գոգերին: Գյուղեր են դրանք ու գյուղակներ:

– Հեռվում Ռշտունյաց լեռներն են,– ասում է հայրս ու ինչ-որ բան պատմում, բայց ես չեմ լսում, իմ ամբողջ ուշքը դեպի Վարագն է, գմբեթները նրա, որոնք, չգիտեմ ինչու, ճմլում են սիրտս: Հիշում եմ Հանկույսներ առաջին անգամ դպրոց գնալս, և ինձ թվում է՝ ոչ թե հայրիկն է բռնել իմ ձեռքից, այլ Օհանը, որ տանում է ինձ օրիորդ Մաքրուհու մոտ և երբ բաց թողնի ձեռքս, կընկնեմ անդունդ...

Ձեռքս հայրիկիս ձեռքում և սիրտս ի դող՝ հասնում ենք Վարագ ու մեծ դարպասից մտնում ներս: Մի խումբ տղաներ խաղում են վանքի բակում:

Ես նրանց և՛ տեսնում եմ, և՛ չեմ տեսնում...

– Նոր աշակերտ, նոր աշակերտ է գալիս,– բացականչում է նրանցից մեկը:

Ես եմ այդ նոր աշակերտը՝ Վարագա Ժառանգավորաց վարժարանի նորընծա սանը:

Բառային աշխատանք

1. Բնագրից դուրս գրիր տասական պարզ, ածանցավոր և բարդ բառ՝ լրացնելով աղյուսակի համապատասխան սյունակներում:

Պարզ բառեր	Ածանցավոր բառեր	Բարդ բառեր

2. Տեքստում ցույց տուր *ջուր* արմատով բառեր: Կազմիր դրանցով նախադասություններ:
3. Տրված բառերով կապակցված խոսք կազմիր՝ վերնագրելով բովանդակությանը համապատասխան:

   Լեռ, անտառազարդ, սաղարթախիտ, սոսափել, վերելք, թփուտ, նայել, պարիսպ, օրիորդ, մենաստան, սան, բացականչել, վանք, բակ:
4. Դուրս գրիր հատուկ անունները և գործածիր նախադասություններում:
5. Տեքստից ընտրիր մեկ պարբերություն և հարստացրու երկխոսություններով:
6. Ինչ լեռնանուններ կան բնագրում: Դուրս գրիր և տեղեկություն տուր դրանց մասին:
7. *Շուշանցը* Վարագալեռների փեշին գտնվող գյուղ է, իսկ *Հանկույսները*՝ թաղամաս Վանում: Ընտրիր այս տեղանուններից մեկը և հաղորդում պատրաստիր (խմբային աշխատանք):
8. Բառարանում գտիր նորածանոթ բառերի բացատրությունը և ներկայացրու քո բառերով:
9. Դուրս գրիր պատկերավորման միջոցները և մեկնաբանիր դրանց գործածության նպատակը:

Տեքստային աշխատանք

1. Վա՛րժ կարդա և պատմի՛ր՝ կիրառելով հայերենի հնչյունական համակարգի արտաբերման և արտասանության առանձնահատկությունները:
2. Կազմի՛ր հարցեր կամ պլան կարդացածիդ շուրջ:
3. Ներկայացրու տեքստի հիմնական միտքը, հենակետային բառերը:
4. Գրավոր վերաշարադրի՛ր դեպքերի հաջորդական ընթացքը:
5. Ո՞վ է քո սիրած հերոսն այս պատմվածքում: Բացատրի՛ր հերոսի(ների) արարքների դրդապատճառները:
6. Գրավոր նկարագրի՛ր քեզ շրջապատող միջավայրը, բնությունը՝ համեմատելով տեքստում նկարագրվածի հետ:
7. Փոխանցի՛ր հեղինակի կյանքի ուղեգիծը, նրա հույզերն ու զգացմունքները:
8. Տո՛ւր հոր բնութագիրը:
9. Ի՞նչ դեր ունի բնությունը գրողի կյանքում:
10. Ի՞նչ դեր ունի Վարագավանքը գրողի կյանքում:
11. Գնահատի՛ր հերոսների վարքագիծը և արտահայտի՛ր քո վերաբերմունքը:
12. Գործող անձի գործունեությունը կապի՛ր քո անհատական կենսափորձի հետ և հիշի՛ր նման իրավիճակներ:
13. Ի՞նչ ուխտատեղի կամ աղոթավայր ես գնացել: Պատմի՛ր այդ մասին:
14. Խրիմյան Հայրիկի մասին հաղորդո՛ւմ պատրաստիր:
15. Ճեպանկարի՛ր բնագրում քեզ դուր եկած բնության տեսարանը: Գունավորի՛ր:
16. Նկարազարդումներով (ապլիկացիայով, ծեփելով) ներկայացրու թեման՝ հաղորդելիք նյութը առավել գրավիչ դարձնելու համար:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: ՊԱՐԶ ԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ: ՀՈԴԱԿԱՊ

Ամեն մի բառ ունի իր բառային իմաստը: Բառը խոսք կազմող լեզվական միավոր է, որը կազմված է հնչյուններից (հազվադեպ մեկ հնչյունից) և ունի բառային շեշտ, օրինակ՝ վա՛րդ, թատրո՛ն, ուղեգո՛րգ, լճա՛փ: Բառերն ունեն ինքնուրույն կիրառություն:

Իմաստ, ինքնուրույն գործածություն և բառային շեշտ ունեցող հնչյունախումբը կամ հնչյունը կոչվում է բառ: Բառի արտահայտած իմաստը կոչվում է բառիմաստ:

Բառի հիմնական մասը արմատն է: Բաղադրիչների չբաժանվող բառամասը, որ արտահայտում է բառի հիմնական նյութական իմաստը, կոչվում է արմատ:

Արմատից բացի բառի բաղադրիչ է համարվում նաև ածանցը: Թեքման դեպքում բառին կարող են ավելանալ վերջավորություններ, որոնք, ի տարբերություն ածանցների, բառի բաղադրիչ չեն համարվում:

Բառերն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ:

Պարզ են այն բառերը, որոնք բաղադրիչ մասերի չեն բաժանվում և կազմված են միայն մեկ արմատից, օրինակ՝ ջուր, ծով, երամ, պապ, տուն: Պարզ բառերը կոչվում են նաև արմատական բառեր:

Բաղադրյալ են այն բառերը, որոնք կազմված են տարբեր բաղադրիչներից՝ արմատ (արմատներ) և ածանց (ածանցներ): Բաղադրյալ բառերը լինում են ածանցավոր, բարդ և բարդածանցավոր:

Ածանցավոր են մեկ արմատից և մեկ կամ մի քանի ածանցներից կազմված բառերը, օրինակ՝ հրեղեն, ցանկալի, հպարտություն, համակարգիչ, բախտավորություն, համալսարան:

Բարդ են մեկից ավելի արմատներից բաղադրված բառերը, օրինակ՝ դաշտավայր, անտառապահ, կարմրախայտ, տղամարդ, փոստարկղ, տնտեսագետ, գրադարանավար:

Բարդածանցավոր են մեկից ավելի արմատներից և մեկ

կամ մի քանի ածանցներից կազմված բառերը, օրինակ՝ փայտ-փորիկ, նորելուկ, բեմահարթակ:

Բաղադրյալ բառերի կազմությանը կարող է մասնակցել նաև հոդակապը: Հոդակապը արմատները կամ ածանցն ու արմատը միմյանց միացնող ա ձայնավորն է, օրինակ՝ անտա-ռապատ, գարնանամուտ, պարագիծ:

Հոդակապը երբեմն կարող է թաքնված լինել՝ հնչյունափո-խությամբ միացած լինելով նախորդ արմատի ի ձայնավորին (ի + ա = ե), օրինակ՝ տարի + ա + դարձ = տարեդարձ, գարի + ա + հաց = գարեհաց: Երբեմն բառի նախավերջին ի ձայ-նավորն է միանում ա հոդակապին և հնչյունափոխվում ե-ի, օրինակ՝ ծաղկեփունջ = ծաղիկ + ա + փունջ (ի + ա = ե), հաշ-վեգետ =հաշիվ + ա + գետ (ի + ա = ե):

Հոդակապն իմաստազուրկ է և ունի բառակազմական ար-ժեք: Այն հիմնականում չի փոխում բառի իմաստը: Սակայն երբեմն հանդիպում են հոդակապի կիրառությամբ և առանց հոդակապի բառային իմաստներով տարբերվող բառազույգեր, օրինակ՝ արջորս – «արջ որսացող», արջաորս – «արջի որսը», թռչնորս – «թռչուն որսացող» և թռչնաորս – «թռչունի որսը»:

Առաջադրանքներ

1. Յուրաքանչյուր շարքից ընտրիր արմատ և ածանց և կազմիր ածանցավոր բառ:

ա) տանձ-ոց	բ) կրակ-ենի
շերեփ-իկ	խնձոր-ոց
ձուկ-ուկ	համ-ային
առու-կան	հեքիաթ-եղ
դպիր-ուտ	գետ-ավոր
թուխս-ակ	վանդակ-ակ

2. Հետևյալ վերջածանցների, արմատների և բառերի միացումով կազմիր բառեր՝ հնարավոր բոլոր ձևերով.

– ալի, –անք, –ություն

Տրտում, *նողկալ*, *իղձ*, *խինդ*, *կարոտ*, *բերկրել*, *քնքուշ*, *ցնծալ*, *ցանկանալ*:

Նմուշ՝ տրտմալի, տրտմանք, տրտմություն:

3. Կազմի՛ր նախածանցավոր բառեր՝ սյունակներից ընտրելով համապատասխան արմատ.

ա) առ – հորեղբայր	բ) տ – դժվարամարս
նախ – ոտաբոբիկ	անդր – կշռաքար
ստոր – ձեռնաշղթա	թեր – հայրենադարձ
ընդ – գլխակեր	ապ – երկնահաս
պար – հպանցիկ	հակ – շնորհաշատ

4. Կազմի՛ր ածանցավոր բառեր միևնույն արմատով (բառով) և տարբեր ածանցներով (երկուական):

Երգ, զգայուն, ըմբռնում, կամք, վարժ, հուն, հատակ, արդյունք, բախտ, գիծ, շնորհ, արձակ, երևույթ, կշռել, կարգ, ձայն, օգուտ, աշխարհ, աճ:

Նմուշ՝ երգ–համերգ, նախերգանք:

5. Արտագրի՛ր և եռասյուն աղյուսակի համապատասխան բաժնում դասդասի՛ր պարզ, բարդ և ածանցավոր բառերը:

Ոլորուն արահետով բարձրանում ենք ձորակն ի վեր: Փոքրիկ, կանաչ մարգագետին, որից հետո բլուրն է սեպաձև, բլրի ստորոտում՝ թփուտներ: Այստեղ գարնանը ծաղկում են կապո՛ւյտ-կապույտ մանրաթերթիկ ծաղիկներ՝ անմոռուկներ:

Բարակ արահետով բարձրանում ենք դարն ի վեր: Դժվար է վերելքը. քայլում ենք դանդաղ, շնչակտուր: Հասնելով կատարը՝ կանգ ենք առնում մի քանի րոպե՝ հանգստանալու, ու նայում ենք հետ: Շուշանցն է հանդիպակաց բլրալանջին: Ահա ժա՛մը, մեր տո՛ւնը...

Պարզ բառեր	Բարդ բառեր	Ածանցավոր բառեր

6. Հովազաձոր, Ծաղկաձոր, Մթնաձոր, Մեղրաձոր բարդ բառերով նախադասություններ կազմիր:

7. Յուրաքանչյուր շարքից ընտրիր մեկական արմատ և ածանց և կազմիր բարդածանցավոր բառ:

գարի	հատ	–ություն
հուր	դար	–ավոր
տոն	ցան	–իչ
բազում	խումբ	–իկ
ծով	նկար	–յան

8. Հետևյալ բառակապակցությունների իմաստն արտահայտիր մեկ բառով:

Կաշվով պատված, կյանքով խնդացող, սուր տեսողություն ունեցող, աշխարհով մեկ սփռված, մարդկանցից խուսափող, կծու համ ունեցող, բարիք շնորհող, վայրկյանի սլաք, ինքն իր կամքով, օրհնության երգ, սյուներով զարդարված, հազարավոր երանգներով, հնությունից մաշված, երախտիքը մոռացող, երկնքի մեջ սուզված, օրենքը զանց առնող, հրեղեն աչքեր ունեցող:

9. Նկարի շուրջ հյուսիր կապակցված խոսք և վերնագրիր: